ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/57

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ Լոռու մարզի Կաթնաջրի համայնքապետարան
Բողոք բերող՝ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ
Երրոդ անձ՝ «Բարվա» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Քոյլոյանի
«Բարվա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Գասպարյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԼՄԿՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցում, հակակարկտային կայանների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 29.06.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել թիվ «ԼՄԿՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. չեղարկելու 24.06.2021թ.-ի թիվ 3 արձանագրությունը,
2. ընդունելու «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 29.06.2021թ.-ին:

01.07.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/57 համարի ծածկագիրը:

08.07.2021թ.-ին ներկայացված միջնորդության հիման վրա «Բարվա» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

08.07.2021թ.-ին, 15.07.2021թ.-ին և 23.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 15.07.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 23.07.2021թ.-ին:

2. «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն 29.06.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1. ՀՀ Լոռու մարզի Կաթնաջրի համայնքապետարանը (այսուհետ նաև Պատվիրատու) իր կարիքների համար հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով 10.06.2021 թվականին հրապարակել է թիվ «ԱՄԿՀ-ԴՀԱՊՁԲ-21/02» գնանշման հարցումը (այսուհետ նաև Գնման ընթացակարգ):

1.2. Վերոհիշյալ գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԲԻԶՆԵՍ ԷԼԻ ՏԱ» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև Մասնակից):

1.3. Գնման Ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շրջանակում հայտերը գահատող հանձնաժողովը 24.06.2021 թվականին թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է ենթադրյալ անհամապատասխանություն, այն մասին, որ մասնակցի կողմից

չի ներկայացվել հավաստագիրը, չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը, ինչպես նաև պաշտոնական աղբյուրներից ստացված տեղեկատվության համաձայն Ընկերությունը չունի հավաստագիր: Նշվածի հիմքով Ընկերության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից Ականավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Նշված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի կողմից ներկայացված հայտում ենթադրյալ անհամապատասխանությունների առկայության դեպքում այն շտկելու նպատակով վարքագծի կանոններ է սահմանել, ոչ միայն մասնակցի, այլ նաև հայտերը գնահատող հանձնաժողովի համար, այսպիսով՝ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում մասնակցի կողմից ներկայացված հայտում անհամապատասխանություն արձանագրելու դեպքում մեկ աշխատանքային օրով

կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ուստի նշված վավերապայմանների պահպանումը հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Վերոհիշյալ իրավական նորմի վերլուծությունից պետք է փաստել հետևյալը, որ Կարգի 67-րդ կետը գնահատող հանձնաժողովին լիազորություններ է վերապահում ստուգելու մասնակցի կողմից ներկայացված տվյալների իսկությունը:

Հատկանշական է այն, որ սույն դեպքում գնահատող հանձնաժողովը նշում է, որ Մասնակիցը հրաժարվում է ներկայացնել հավաստագիրը և եթե մասնակիցը չի ներկայացնում հավաստագիր, ապա որ ներկայացրած տվյալի իսկությունն է հանձնաժողովը ստուգում: Օրենսդիրը սահմանել է հստակ դրույթ, որ իսկության ստուգում կարող է կատարվել միայն մասնակցի ներկայացրած տվյալների վերաբերյալ, իսկ եթե տվյալ ներկայացված չէ, ապա չի կարող իսկության ստուգում կատարվել, նմանատիպ վարքագիծը իրավաչափ չէ: Բացի այդ օրենսդիրը սահմանել է նաև հանձնաժողովի համար պատճառաբանված որոշման առկայություն, որը վերաբերվում է, ոչ թե՞ անձնաց սրտի ցանկություններին, այլ հրավերով նախատեսված այնպիսի պայմաններին, որի պահանջի իրավունքը հանձնաժողովի ունի և որի արդյունքում կարող է ստուգել իսկությունը, եթե առկա են հիմնավոր պատճառներ:

Սույն դեպքում հրավերով նախատեսված չէ պարտադիր պայման հավաստագրի ներկայացման համար, գնահատող հանձնաժողովը դուրս է եկել իր լիազորությունների շրջանակից պահանջելով դա, ի շարունակություն դրա ապօրինի գործողություններով չներկայացված տվյալի իսկության ստուգման փորձ է կատարել, այն դեպքում երբ իրավասու էր ստուգել ներկայացված տվյալի իսկությունը և ի վերջո 24.06.2021 թվականի թիվ 3 արձանագրությամբ, փորձելով շտկել իր խախտումները նշեց թե իբր արձանագրված անհամապատասխանությունը Մասնակիցը չի շտկել, թույլ տալով Կարգի 41-րդ կետի խախտում: Ոչ իրավաչափ վարքագծի արդյունքում ոտնահարվեցին «ԲԻԶՆԵՍ ԷԱԻՏԱ» ՍՊ ընկերության իրավունքները և մասնակցի հայտը գնահատվեց անբավարար ակնհայտ անօրինական եղանակով:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել թիվ «ԼՄԿՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. չեղարկելու 24.06.2021թ.-ի թիվ 3 արձանագրությունը,
2. ընդունելու «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու որոշում:

«Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն 12.06.2020թ.-ին ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում քննվող թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021-57 ընթացակարգի շրջանակում 08.07.2021 թվականին հրավիրված բողոքի քննության ընթացքում երրորդ անձի ներկայացուցիչը անդրադառնալով Պատվիրատուի գործողություններին հայտնեց, որ թիվ «ԼՄԿՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» գնման ընթացակարգի շրջանակում (այսուհետ նաև Գնման ընթացակարգ) կնքված պայմանագիրը հրապարակվել է 01.07.2021 թվականին 09.30-ին իսկ բողոքի վերաբերյալ հայտարարությունը անց 10:

Հստակ ժամանակագրություն չնշելով, թե՞ անց տասը, որ անց 10-ին էր վերաբերվում կրկին անգամ փորձ էր կատարում խեղաթյուրել առկա փաստերը:

www.gnumner.am կայքում տեղադրված տեղեկատվությունից ակնհայտ է, որ գնման ընթացակարգի շրջանակում բողոքի վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է 01.07.2021 թվականին 10:30, իսկ պայմանագիր կնքելու հայտարարությունը նույն օրը 11:55-ին, որից ակնհայտ է, որ երրորդ անձի ներկայացուչի բանավոր դիրքորոշումներում հայտնած տեղեկությունները չեն համապատասխանում գործի փաստերին:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 13-րդ կետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Գնումների մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը

լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

Նշված իրավական նորմերի և սույն գործերի փաստերի վերլուծության համատեքստում ակնհայտ է, որ եթե գնման ընթացակարգը բողոքարկվել է, ապա այն՝ այդ թվում, անգործության ժամկետը կասեցված է, ուստի այդ ժամանակահատվածում կնքված պայմանագիրը առ ոչինչ է:

Գնահատող հանձնաժողովը բողոքարկված գնման ընթացակարգի շրջանակում գործել է ոչ իրավաչափ, որը վերաբերվում է նաև պայմանագրի կնքմանը և այս պահին հղում կատարել այն հանգամանքին, որ կնքվել է պայմանագիր, ակնհայտ անհիմն է, քանզի գործարքը առոչինչ է կնքման պահից և դրան հղում կատարել Պատվիրատուն չի կարող:

Նշվածը ապացուցվում է ինչպես այն հանգամանքով, որ պայմանագրի կնքման վերաբերյալ հայտարարությունը gnumner.am կայքում հրապարակվել է 1 ժամ 25 չոպե անց քան հրապարակվել է բողոքի վերաբերյալ հայտարարությունը և ավելին առավել քան վստահ եմ, որ պատվիրատուին ներկայացված հաստատված պայմանագրի նախագիծը ներկայացնելու գրությունը չի հաշվառվել պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում, որը ինքնին նույնպես կհանդիսանա բավարար ապացույց այն մասին, որ պայմանագիրը կնքվել է սույն գործով ներկայացված բողոքի հրապարակումից հետո:

Պայմանավորված վերոգրյալով խնդրում եմ սույն լրացումը քննության առնել հիմնական բողոքի հետ միասին, ինչպես նաև միջնորդում եմ պահանջել Պատվիրատուից ներկայացնելու թիվ «ԼՄԿՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» գնման ընթացակարգի շրջանակում հաստատված պայմանագրի նախագիծը ներկայացնելու գրությունը պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում հաշվառված լինելու վերաբերյալ ապացույց:»:

3. <u>ՀՀ Լոռու մարզի Կաթնաջրի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 01.07.2020թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/10758-2021 գրությամբ դիմել է ՀՀ Լոռու մարզի Կաթնաջրի համայնքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից 29.06.2021թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 02.07.2020թ.-ին թիվ ԿԳԵ-212 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Բողոքաբեր/ կողմից ներկայացված ԼՄԿՀ-ԳՀԱՊՁԲ-21/02ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ բողոքին հայտնում ենք Ձեզ հետևյալը.

Սույն ընթացակարգով, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել է 24.06.2021թ. ժամը 17:03-ին, որում նշվել է, որ Գնումների մասին օրենքի՝ 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացույցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, այսինքն 29.06.2021թ. ներառյալ:

Հրավերի 9.2 կետը սահմանում է, որ անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան անգործության ժամկետի լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը այսինքն 01.07.2021թ.-ից ոչ շուտ: Հաշվի առնելով համայնքի համար հակակարկտային կայանների ձեռքբերման հրատապությունը, սույն ընթացակարգով, 30.06.2021թ. <<Բարվա ՍՊԸ>> սահմանված կարգով ծանուցվել է և 01.07.2021թ. առավոտյան 09:20 սահմաններում առձեռն Կաթնաջրի համայնքապետարան է մուտքագրել միակողմանիորեն հաստատված պայմանագրի օրինակները և տուժանքի համաձայնագրերը՝ համապատասխան կից գրությամբ, որից հետո 10:00-ի սահմաններում ստորագրվել է պայմանագիրը և կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը ուղարկվել է մարզպետարան սահմանված կարգով պաշտոնական տեղեկագրում հրապարակման, որը կատարվել է: Բողոքաբերի ներկայացրած բողոքի վերաբերյալ մենք տեղեկացվել ենք էլեկտրոնային եղանակով, միայն վերոգրյալ արդեն իսկ իրականացված գործընթացներից հետո /բողոքը պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է 01.07.2021թ. ժամը 10:30-ից հետո/:

Ցանկանում եմ տեղեկացնել նաև, որ կնքված պայմանագրով ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 20 օրացույցային օր, այն է մինչև ս.թ. հուլիսի 20-ը:

Հաշվի առնելով վերոգրյալը, մեր կարծիքով մրցույթի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ, հաշվի առնելով համայնքի շահը, միևնույն ժամանակ տառացիորեն պահպանելով բոլոր սահմանված ժամկետները և կարգավորումները, ուստի խնդրում ենք բողոքի վարույթ ընդունումը մերժել և թույլ տալ շարունակել պայմանագրի կատարումը:»:

Պատվիրատուն 08.07.2021թ.-ին թիվ ԿԳԵ-218 գրությամբ ներկայացված դիրքորոշման լրացմամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ի լրումն «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի /այսուհետ Բողոքաբեր/ կողմից ներկայացված ԼՄԿՀ-ԳՀԱՊՁԲ-21/02 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ բողոքին տրված մեր դիրքորոշմանը հայտնում ենք Ձեզ հետևյալը.

ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի կողմից հայտարարված ԼՄԿՀ-ԳՀԱՊՁԲ-21/02 ծածկագրով հակակարկտային կայանների ձեռքբերման մրցույթին հայտ էր ներկայացրել նաև Բողոքաբերը: Հրավերի տեխնիկական բնութագրով ի թիվս այլ պահանջների սահմանվել էր նաև, որ արտադրող ընկերությունը պետք է ունենա ISO 9001 սերտիֆիկատ: Հայտով Բողոքաբերը հավաստել է, որ ունի նմանատիպ սերտիֆիկատ: Հանձնաժողովը հաշվի առնելով գնման առարկա հանդիսացող հակակարկտային կայանների տեղադրման հրատապությունը համայնքի համար գյուղատնտեսական եռուն շրջանում, հայտերի բացման նիստի ընթացքում ընդամենը բանավոր կերպով առաջարկեց ներկայացնել այն, ինչին Բողոքաբերի լիազորված ներկայացուցիչը պատասխանեց հրաժարումով, առաջարկելով պաշտոնական աղբյուրներից ճշտել սույն տեղեկատվությունը: Քանի որ առկա էր նաև մյուս մասնակցի կողմից Բողոքաբերի ներկայացված տվյալների իսկության ստուգման վերաբերյալ գրություն, հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել, համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 67-րդ մասով սահմանված դրույթների, ձեռնարկել միջոցներ ՀՀ-ում հավատարմագրված սերտիֆիկացման երեք կազմակերպություններին կատարել հարցում Բողոքաբերի անունով գրանցված նշված սերտիֆիկատի առկայության վերաբերյալ, բոլոր երեք կազմակերպություններից ստացվել է բացասական պատասխան, որոնք կցվում են: Հանձնաժողովը նշված տվյալները ստանալուց և ամփոփելուց հետո, թիվ 3 արձանագրությամբ մերժել է բողոքաբերի հայտը:

Ամփոփելով վերոգրյալը, գտնում ենք, որ բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

Կից ներկայացնում եմ <<Նարեկ>> գիտահետազոտական ՓԲԸ-ի, <<ՀՀ Ստանդարտացման և Չափագիտության Ազգային Մարմնի>> և <<Սերտիֆիկացում և որակ>> ՍՊԸ-ի գրությունները:»:

<u>4. Երրորդ անձ՝ «Բարվա» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ «ԼՄԿՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում

«Բարվա» ՍՊԸ-ն 08.07.2021թ.-ին ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

Երրորդ անձը, լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին և իր առարկություններն է հայտնել ներկայացված բողոքի հիմքերի ու հիմնավորումների վերաբերյալ:

5. <u>ԳԲՔԱ-LO-2021/57 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ Լոռու մարզի Կաթնաջրի համայնքապետարանի կողմից հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով 10.06.2021թ.-ին հայտարարվել է «ԼՄԿՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. 24.06.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ԼՄԿՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

iii. Հայտարարությամբ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

iv. «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից 29.06.2021թ.-ին ժամը 12:10-ին ներկայացվել է բողոք:

v. Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 29.06.2021թ.-ին ժամը 12:19-ին:

vi. Բողոքներ քննող անձի կողմից 01.07.2021թ.-ին, ժամը 10:30-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ (այսուհետ նաև՝ Հայտարարություն) բողոքը ընդունվել է վարույթ:

vii. Հայտարարությամբ՝ Բողոքներ քննող անձը տեղեկացրել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը

հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

viii. Պատվիրատուի կողմից www.gnumner.am կայքում 01.07.2021թ.-ին, ժամը 11:55-ին հրապարակվել է «ԼՄԿՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի մասին հայտարարություն:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից 29.06.2021թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է բավարարման մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ … բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի (այսուհետ նաև՝ Հրաման) 9-րդ կետի համաձայն՝ բողոքը վարույթ ընդունելու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում Անձը բողոքը և դրա վերաբերյալ հայտարարությունը, հրապարակում է տեղեկագրում:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պայմանագիր կնքելու մասին որոշումը: Նման պարագայում բողոքը ներկայացվում է օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում: Բողոքներ քննող անձը բողոքը ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին հայտարարություն է հրապարակում տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, որի արդյունքում հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման ուժի մեջ մտնելու օրը գնման գործընթացը ինքնաբերաբար կասեցվում է:

Այսինքն՝ գնման գործընթացը կասեցվում է օրենքի ուժով, այն է՝ ներկայացված բողոքը վարույթ ընդունելու մասին նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից և շարունակում է ընթացակարգը կասեցված մնալ մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Ընդ որում, Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված է Բողոքներ քննող անձի իրավասությունների շրջանակը, որից և ելնելով Բողոքներ քննող անձը քննում է ներկայացված բողոքն ու կայացնում է որոշումներ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Լոռու մարզի Կաթնաջրի համայնքապետարանի կողմից հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով 10.06.2021թ.-ին հայտարարված «ԼՄԿՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը www.gnumner.am կայքում հրապարակվել է 24.06.2021թ.-ին: Հայտարարությամբ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

«Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից 29.06.2021թ.-ին ժամը 12:10-ին ներկայացվել է բողոք: Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 29.06.2021թ.-ին ժամը 12:19-ին: Բողոքներ քննող անձի կողմից 01.07.2021թ.-ին, ժամը 10:30-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ: Պատվիրատուի կողմից www.gnumner.am կայքում 01.07.2021թ.-ին, ժամը 11:55-ին հրապարակվել է «ԼՄԿՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի մասին հայտարարություն:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «ԼՄԿՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը՝ օրենքի ուժով, կասեցվել է 01.07.2021թ.-ին, ժամը 10:30-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ, ինչի մասին Պատվիրատուն և գնահատող հանձնաժողովը տեղեկացվել են www.gnumner.am կայքում հրապարակված, ինչպես նաև Բողոքներ քննող անձի կողմից 01.07.2021թ.-ին ուղարկված թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/10758-2021 գրությամբ: Սակայն Հայտարարության հրապարակման նույն օրը՝ 01.07.2021թ.-ին, ժամային տարբերությամբ, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է կնքված պայմանագրի մասին հայտարարություն:

Ելնելով վերոգրյալ իրավական ու փաստական հանգամանքերից, դրանց համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ սույն դեպքում՝ գնման ընթացակարգի շրջանակներում կնքված պայմանագրի առկայության պայմաններում, սույն բողոքի քննությունը դառնում է առարկայազուրկ, այն փաստի հաշվառմամբ, որ խախտումներ արձանագրելու դեպքում, այն չի կարող հանգեցնել կնքված պայմանագրի անվավեր ճանաչման մասին որոշում կայացնելուն՝ հիմք ընդունելով Օրենքի Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով ամրագրված Բողոքներ քննող անձին վերապահված լիազորությունների ու իրավասությունների սահմանները:

Միաժամանակ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի

Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: Սույն կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում հսկողություն և (կամ) վերահսկողություն իրականացնող մարմինները, իսկ մյուս դեպքերում պատվիրատուն այդ մասին ծանուցում են իրավապահ մարմիններին՝ վերջիններիս և պայմանագիր կնքած մասնակցին ներկայացնելով հիմքերը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել թիվ «ԼՄԿՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեղարկելու 24.06.2021թ.-ի թիվ 3 արձանագրությունը և ընդունելու «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու որոշում:

Ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն և «Բարվա» ՍՊԸ-ն, ներկայացնելով համապատասխանաբար՝ 10 000 000 ՀՀ դրամ և 8 750 000 ՀՀ դրամ գումար առանց ԱԱՀ գնային առաջարկներ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2021թ.-ի թիվ 3 արձանագրությամբ «Բարվա» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Վերոգրյալ իրավական նորմի լույսի ներքո, ուսումնասիրելով գործում առկա՝ վերը թվարկված փաստերը, ինչպես նաև Հանձնաժողովի 17.06.2021թ.-ի թիվ 2 արձանագրությունն ու վերջինիս կողմից ստացված հարցումների պատասխանները՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ տվյալ դեպքում առկա չեն այնպիսի հանգամանքներ, փաստական տվյալներ, որոնց հաշվառմամբ հնարավոր կլիներ արձանագրել «Բարվա» ՍՊԸ-ի կողմից կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) ներկայացնելու փաստը, կամ այն, որ Երրորդ անձին ընտրված մասնակից ճանաչելու մասին Հանձնաժողովի կողմից կայացված որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, որպիսի պայմաններում՝ վերջինիս հետ կնքված պայմանագրի ոչ իրավաչափ լինելը:

Այլ կերպ ասած՝ Հանձնաժողովի կողմից «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի մասով իրականացված գործողությունների (այդ թվում՝ անգործության) անգամ որպես ոչ

իրավաչափ լինելու հանգամանքի արձանագրման դեպքում, և Ընկերության հայտը մերժելու մասին կայացված որոշումը դադարեցնելուն պարտավորեցնելու մասին բողոքով ներկայացված պահանջի բավարարմամբ, այն չի կարող հանգեցնել Հանձնաժողովի 24.06.2021թ.-ի թիվ 3 արձանագրությամբ «Բարվա» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին կայացված որոշման փոփոխման՝ պատճառահետևանքային կապի բացակայությամբ պայմանավորված: Ինչպես նաև՝ «Բարվա» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխան և բավարար, և վերջինս է ներկայացրել նվազագույն գնային առաջարկ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված պահանջը, կնքված պայմանագրի առկայության պայմանենրում, դառնում է առարկայազուրկ, ուստի և մերժման ենթակա:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից 29.06.2021թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/57 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**